ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԸ

Մեր տարածաշրջանում երկրների հարաբերությունների աշխուժացման կամ թուլացման առաջին ազդանշանը հարևանների հետ առևտրաշրջանառության ծավալների փոփոխություններն են: Այս տեսանկյունից կարևոր է իմանալ, թե Հայաստանի և հարևան երկրների (մասնավորապես Թուրքիայի) առևտրաշրջանառության ծավալներում ինչ ապրանքատեսակներ են գերակշռում, և տարածաշրջանի երկրները որ ապրանքների արտադրության մեջ համեմատական առավելություն ունեն:

Հարևան երկրի հետ տնտեսական համագործակցության հնարավոր ուղիների որոնումը և այդ համագործակցությունից ստացվող տնտեսական օգուտներն ի նպաստ Հայաստանի վերաբաշխելը կենսական անհրաժեշտություն է:

Հայաստանը տրանսպորտային բարձր ծախսեր ունեցող երկրների շարքին է դասվում, և բացի այդ, այն ուղղակի ծովային ելք չունի: Այդ գործոններին հաճախ ավելանում է տեղական հումքի ոչ բավարար լինելը, երբեմն նաև դրա բացակայությունը: Հետևանքն այն է, որ Հայաստանը, հարմարվելով նշված սահմանափակումներին, մասնագիտացել է ցածր տրանսպորտային ծախսեր պահանջող ներկրվող հումքի վրա արժեք ավելացնող ճյուղերում: Այդ հանգամանքը հայկական արտահանումը կախյալ է դարձնում ներկրվող հումքի գներից, ինչը անդրադառնում է ինքնարժեքի, հետևաբար նաև արտահանվող ապրանքի մրցունակության վրա:

1993-ին Թուրքիան միակողմանիորեն փակեց Հայաստանի հետ սահմանը, որն էլ ավելի սրեց վերը նշված գործոնների ազդեցությունը մեր տնտեսության զարգացման վրա: Բնականաբար ակնկալվում է, որ երբ Թուրքիան վերաբացի սահմանը, Հայաստանի սպառողները և որոշ տնտեսական ճյուղեր կշահեն, մինչդեռ մյուսները չեն դիմանա Թուրքիայից ներմուծվող ապրանքների մրցակցությանը և կտուժեն: Այս հոդվածում փորձ է արվում վեր հանել, թե Հայաստանի և Թուրքիայի միջև ապրանքների ազատ հոսք սկսվելու դեպքում արտադրության որ ճյուղերը կշահեն, և որոնք կտուժեն: Բաց սահմանի պայմաններում շահող ճյուղերի բացահայտման նպատակով ելակետ է ընդունվել համեմատական առավելությունների գաղափարը: Ենթադրվում է, որ Հայաստանի այն արտադրական ճյուղերը, որոնք համեմատական առավելություն ունեն, թուրքական շուկա ազատ մուտք գործելու դեպքում կշահեն և կընդլայնվեն, իսկ այն ճյուղերը, որոնք համեմատական առավելություն չունեն, կտուժեն:

Հայաստանի շրջափակումը վերացնելուց հետո Թուրքիան կարող է դառնալ տարանցիկ երկիր՝ Եվրամիության, Միացյալ Նահանգների և մյուս երկրների հետ Հայաստանից ներմուծման և արտահանման համար: Դա հնարավոր է այն դեպքում, եթե Հայաստանից դեպի Արևմտյան Եվրոպա արտահանման ճանապարհային ծախսերը Թուրքիայի տարածքով ավելի փոքր լինեն, քան Վրաստանի տարածքով: Եթե Հայաստանից դեպի այլ երկրներ արտահանման ճանապարհային ծախսերը Թուրքիայի տարածքով ավելի նվազ լինեն, ապա շրջափակման վերացումը նոր հնարավորություններ կընձեռի Հայաստանից արտահանման համար: Սույն հոդվածում ուսումնասիրության առարկան ոչ թե բաց սահմանի ազդեցությունն է առհասարակ Հայաստանի և տարբեր երկրների առևտրի վրա, այլ հատկապես Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրի վրա:

Բաց սահմանի պայմաններում Հայաստանի արտադրության շահող և տուժող ճյուղերի, մասնավորապես տնտեսության արտադրական ոլորտի վրա ազդեցությունը որոշելու համար դիմել ենք գործնականում համեմատաբար հեշտ կիրառելի մեթոդի: Խոսքը լայնորեն օգտագործվող **արտահայտված համեմատական առավելությունների (ԱՀԱ)** մեթոդի մասին է, որն առաջարկվել է Բելա Բալասայի կողմից[1]: ԱՀԱ-ի հիմնական գաղափարն այն է, որ եթե երկիրը մեծ քանակությամբ որևէ արտադրանք է արտահանում, ապա այդ ապրանքն արտադրվում է արդյունավետ եղանակով և համեմատական առավելություն ունի դրա արտադրության խնդրում:

Մեր պարագայում, այս հայեցակարգը կարող է օգտակար լինել այն ապրանքների համար, որոնք երկիրը կարողանում է արտահանել, և տվյալ մեթոդը հնարավորություն կտա հիմնավորելու, որ Հայաստանն այդ ապրանքների արտադրության ոլորտում համեմատական առավելություն ունի: Սակայն, եթե այդ մեթոդը ցույց տա, որ ներկայումս Հայաստանը ԱՀԱ չունի որոշ ապրանքների արտադրության ոլորտում, այդ արդյունքը կարող է ճշգրիտ չլինել շրջափակման և այն իրողության պատճառով, որ Հայաստանի տնտեսությունը փոքր է, իսկ Թուրքիայինը՝ համեմատաբար մեծ: Հնարավոր է, որ ներկայումս Հայաստանն արտադրում է որևէ ապրանք, սակայն ի վիճակի չէ այն արտահանել: Բայց երբ սահմանը վերաբացվի, Հայաստանը հնարավորություն կունենա արտահանելու այդ ապրանքը Թուրքիա, և թուրքական շուկայի մատչելիությունը նոր հնարավորություններ կստեղծի այն ապրանքների համար, որոնք Հայաստանը կարող է արտադրել արդյունավետ եղանակով և էժան:

Պարտադիր չէ, որ սահմանի բացումը ազդեցություն ունենա հարևան երկրի տնտեսության թե՛ այն ճյուղերի վրա, որոնց դեպքում նա համեմատական առավելություն ունի, թե՛ այն ճյուղերի վրա, որոնց դեպքում համեմատական առավելություն չունի, քանի որ հայկական շուկան համեմատաբար փոքր է:

Սա նշանակում է, որ սահմանի վերաբացման պարագայում Թուրքիայի տնտեսական ճյուղերի համար ԱՀԱ մեթոդով ստացվող արդյունքներն էապես չեն փոփոխվի, հետևաբար ԱՀԱ հայեցակարգը ավելի շատ Թուրքիայի համար ճշգրիտ արդյունքներ կարող է ապահովել, քան Հայաստանի:

Հայաստանի և Թուրքիայի տնտեսական ճյուղերի ԱՀԱ-ն չափելու համար պետք է հաշվարկենք՝

---

[1] Balassa Bela, 1986, 'Comparative Advantage in Manufactured Goods: A Reappraisal', The Review of Economics and Statistics, 68, 315-319.

- յուրաքանչյուր i-րդ ճյուղի արտահանման արժեքը, Xi,
- յուրաքանչյուր i-րդ ճյուղի ներմուծման արժեքը, Mi
- այնուհետև յուրաքանչյուր ճյուղի արտահայտված համեմատական առավելությունը, RCAi:

RCAi=(Xi-Mi)/(Xi+Mi)

Ուսումնասիրելով Հայաստանի[1] և Թուրքիայի[2] 2006թ. Վիճակագրական Տարեգրքերի՝ Արտաքին առևտուրը ըստ ապրանքային խմբերի բաժինները, հաշվարկել եմ 97 ապրանքային խմբերի ԱՀԱ-ն արժեքները: Եթե ապրանքային խմբի ԱՀԱ-ն հավասար է մեկի (1.0), նշանակում է ներմուծումը զրոյական է, այսինքն՝ երկիրը արտադրում է այդ ապրանքը՝ բավարարելով ներքին կարիքները և արտահանելով դրա մի մասը: Այսինքն՝ երկիրը կարող է արդյունավետորեն արտադրել այդ ապրանքը և համեմատական առավելություն ունի դրա արտադրության հարցում: Մյուս կողմից, եթե ԱՀԱ-ն հավասար է 1-ի, նշանակում է երկիրը չի կարող արտահանել այդ ապրանքը և ներմուծում է այն՝ սեփական պահանջարկը լրիվ կամ մասամբ բավարարելու համար:

Համաձայն հաշվարկների, ներկայումս կան մի քանի ապրանքային խմբեր, որտեղ Հայաստանը բարձր դրական ԱՀԱ ունի, մինչդեռ Թուրքիայի ցուցանիշը բացասական է: Դա վկայում է, որ սահմանի վերաբացման դեպքում Հայաստանը կարող է հաջողությամբ արտահանել այդ ապրանքները, իսկ Թուրքիան՝ ներմուծել դրանք համեմատաբար մեծ ծավալով: Այն ապրանքային խմբերը, որոնցում Հայաստանն ակնհայտ ԱՀԱ ունի, հետևյալն են՝ **խումբ 41** Կաշի և կաշվե հումք, **խումբ 72** Սև մետաղներ, **խումբ 74** Պղինձ և պղնձե իրեր, **խումբ 78** Արճիճ և արճճե իրեր, **խումբ 81** Այլ ոչ թանկարժեք մետաղներ, **խումբ 88** Թռչող ապարատներ և դրանց մասեր, **խումբ 91** Ժամացույցներ և դրանց մասեր:

Մինչդեռ, կան համեմատաբար մեծ թվով ճյուղեր, որոնցում Թուրքիան բարձր դրական ԱՀԱ ունի, մինչդեռ Հայաստանի ցուցանիշը բացասական է: Դրանք այն խմբերն են, որոնց արտադրանքը Թուրքիան կարողանում է համեմատաբար ավելի շատ արտահանել, քան ներմուծում է, մինչդեռ Հայաստանը համեմատաբար ավելի շատ ներմուծում, քան արտահանում է: Ենթադրվում է, որ բաց սահմանի դեպքում հարևան երկիրը կկարողանա արտահանել այդ ապրանքները Հայաստան, ինչը կարող է ծանր կացության մեջ դնել հայ արտադրողներին: Այդ խմբերն են՝ **խումբ 2** Միս և մսի ենթամթերքներ, **խումբ 7** Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ, **խումբ 8** Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսների արմատներ և այլ բոստանային մշակաբույսեր, **խումբ 11** Ալրաղացային-ձավարեղենային արտադրանք, ածիկ, օսլա, ինուլին և այլն, **խումբ 14** Բուսական նյութեր հյուսվածքային արտադրանքների պատրաստման համար, այլ բուսական արտադրանքներ, **խումբ 16** Մսից, ձկներից և այլ անողնաշարավորներից արտադրանք, **խումբ 17** Շաքար և շաքարով պատրաստվող հրուշակեղեն, **խումբ 18** Կակաո և դրանով պատրաստված մթերք, **խումբ 19** Ցորենից, ալյուրից, օսլայից և կաթից պատրաստված ապրանք, ալյուրից հրուշակեղեն, **խումբ 24** Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ, **խումբ 43** Բնական և արհեստական մորթի և դրանից պատրաստված իրեր, **խումբ 58** Հատուկ գործվածքներ, ասեղնագործ գործվածքներ, գոբելեններ, հարդարման նյութեր և այլն, **խումբ 59** Տեքստիլ, կրկնագործված, հարստացված ծածկույթով իրեր և դրանցից տեխ. իրեր, **խումբ 60** Մեքենայական կամ ձեռագործ տրիկոտաժե կտավ, **խումբ 63** Այլ պատրաստի տեքստիլ իրեր, օգտագործած հագուստ և տեքստիլ իրեր, **խումբ 68** Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից, **խումբ 69** Կերամիկական իրեր, **խումբ 70** Ապակի և ապակե իրեր, **խումբ 73** Իրեր սև մետաղներից, **խումբ 89** Նավեր, նավակներ և այլ լողացող միջոցներ, **խումբ 94** Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր: Ինչ վերաբերում է մնացած խմբերին, ապա Հայաստանի և Թուրքիայի ԱՀԱ արժեքները բավականին մոտ են իրար, հետևաբար, ճշգրիտ արդյունքներ չեն ապահովում:

Հաշվարկները միանշանակորեն հաստատում են այն ակնհայտ իրողությունը, որ Թուրքիայի տնտեսությունը բավականին մեծ է Հայաստանի տնտեսության համեմատությամբ: Բնականաբար թուրքական տնտեսության յուրաքանչյուր ճյուղի արտահանման և ներմուծման հնարավորությունները շատ ավելի մեծ են: Սա իր հերթին նշանակում է, որ սահմանի վերաբացումը ավելի մեծ ազդեցություն կգործի Հայաստանի տնտեսության վրա, քան Թուրքիայի: Ազդեցությունը, ինչպես վերը նշեցինք, ունի թե՛ դրական, թե՛ բացասական գործոններ: Տրանսպորտային և արտահանման առումներով հայկական կողմը ստանում է նոր հորիզոններ: Ծախսերի նվազեցումը և նոր շուկաների հասանելիությունը կարող են լուրջ խթան դառնալ տնտեսության զարգացման համար: Մինչդեռ, արտահանման ծավալների հնարավոր մեծացման առումով ներքին արտադրողները խիստ մրցակցությանը դիմակայելու և որակի բարձրացման խնդիր ունեն:

Այսպիսով, հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում, Հայաստանը կկանգնի առնվազն երկու հիմնախնդրի առջև. ուղիներ գտնել Թուրքիայի հետ առևտրից հնարավորինս մեծ օգուտ քաղելու համար և, միաժամանակ, նվազեցնել դրա բացասական ազդեցությունը: Օրինակ, եթե թուրքական կառավարությունը սուբսիդավորում է տնտեսության որևէ ճյուղ, ապա Հայաստանում համապատասխան ճյուղի արտադրողների համար բավական դժվար կլինի հավասար մրցակցային գոտում հայտնվել, և այդ ոլորտի թե՛ ձեռնարկությունները, և թե՛ աշխատողները կտուժեն: Մյուս կողմից՝ Հայաստանի սպառողները կարող են շահել՝ թուրքական էժան ապրանքները ձեռք բերելու հնարավորություն ստանալով: Այսինքն, սա միարժեք իրավիճակ չէ: Միջազգային առևտրի տեսությունը ենթադրում է, որ նրանք, ովքեր շահում են առևտրի ազատականացումից, փոխհատուցում են տուժողներին, ասել է թե, երկիրը հավասարակշռում է դրական և բացասական ազդեցությունները:

Իրականում խնդիրն այն է, թե որքանով կարելի է երաշխավորել տուժած կողմի փոխհատուցումը,

---

[1] ՀՀ Վիճակագրության ազգային ծառայություն, www.armstat.am

[2] Turkish Statistical Institute (TURKSTAT), www.turkstat.gov.tr

բանգի երկրները մեծ մասամբ գործ ունեն հակառակ երևույթի հետ[1]: Այդ է պատճառը, որ զարգացած երկրներում գործում է սոցիալական ապահովության համակարգը, որին կարող են ապավինել առևտրի ազատականացման հետևանքով իրենց աշխատանքը կորցրածները: Այսպես, Միացյալ Նահանգներում Առևտրի աջակցման ծրագիրը նպատակայնորեն զբաղվում է ազատ առևտրի պատճառով տուժած աշխատողների կամ արդեն իսկ գործազուրկների խնդիրներով[2]: Ի դեպ, առևտրի ազատականացման ընդդիմախոսների հիմնական թեզը դրա ազդեցությունն է տնտեսության որոշ ոլորտներում զբաղվածության նվազեցման վրա:

Հայաստանի կառավարությունը նմանատիպ առևտրի աջակցման ծրագրի միջոցով կարող է սպառողների որոշ օգուտներ փոխանցել այն ճյուղերի արտադրողներին ու աշխատողներին, որոնք տուժել են ազատականացումից: Նույն ԱՄՆ-ում տրամադրվում են գործազրկության լրացուցիչ նպաստներ, և վերարտակավորման ծրագրերին մասնակցելու հնարավորություն է ընձեռվում[3]: Նման միջազգային փորձի կիրառումը կարող է թուլացնել ընդդիմադիր մոտեցումները ազատ առևտրի նկատմամբ, ինչպես նաև մեղմել այն զարգացումները, որոնք կարող են վտանգել որոշ ճյուղեր:

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական ներուժով Թուրքիան Հայաստանի ամենից նշանակալի հարևանն է: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն համադրելի գներով Թուրքիայում մոտ երկու անգամ ավելին է, քան Հայաստանում[4]:

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական համագործակցությանը, ապա այն բախվում է բազմաթիվ հիմնախնդիրների հետ: Դրան ամենից առաջ խոչընդոտում են ոչ թե տնտեսական կամ կրոնական գործոնները, այլ ձևավորված բարդ ու առայժմ անլուծելի քաղաքական իրավիճակը: Սակայն որքան էլ քաղաքական հարաբերությունները այս երկրի հետ լարված լինեն, վաղ թե ուշ դրանք պետք է մղվեն ետին պլան՝ տնտեսական հարաբերությունների զարգացման ճանապարհով, քանի որ Թուրքիան հանդիսանում է Հայաստանի բնական հարևանը, և բացի այդ հավակնում է դառնալ Եվրամիության անդամ մոտ ապագայում:

Այս հոդվածում կփորձենք պարզաբանել, թե Հայաստանը արդյոք ունի Թուրքիայի նկատմամբ համեմատական առավելություններ աշխատատար, կապիտալատար, բարձր տեխնոլոգիական կամ գյուղատնտեսական ապրանքների արտադրության ոլորտում:

Հեկշեր-Օլինի մոդելը պնդում է, որ երկիրը կունենա համեմատական առավելություն և կարտահանի աշխատատար արտադրանք, եթե այն ունի աշխատուժի համեմատաբար առատություն, և կունենա համեմատական առավելություն ու կարտահանի կապիտալատար արտադրանք, եթե այն ունի կապիտալի համեմատաբար առատություն:

Հեկշեր-Օլինի մոդելը կիրառելու համար օգտվել եմ «Սննդի և Գյուղատնտեսության Կազմակերպության», «Էներգետիկայի Միջազգային Գործակալության», «Աշխատանքի Միջազգային Կազմակերպության», «ՍԱԿ-ի Կրթական, Գիտական և Մշակութային Կազմակերպության» (UNESCO) Վիճակագրության Ինստիտուտի[5], Հայաստանի և Թուրքիայի Ազգային Վիճակագրական Ծառայությունների տվյալների բազայում ներկայացված տնտեսական, դեմոգրաֆիկ և սոցիալական ցուցանիշներից: Այս ցուցանիշները կարող են տեղեկություններ ապահովել ինչպես Հայաստանի, այնպես էլ Թուրքիայի հողի, աշխատուժի, բարձր որակավորում ունեցող աշխատուժի և կապիտալի համեմատական պաշարների վերաբերյալ:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության ոլորտում 2006 թվ.-ին Թուրքիան ունեցել է մեկ շնչի հաշվով ավելի շատ վարելահող, քան Հայաստանը: Մասնավորապես, Թուրքիան 2006 թվ.-ի ընթացքում ունեցել է մեկ շնչին ընկնող 0,33 հեկտար, մինչդեռ Հայաստանը՝ միայն 0,17 հեկտար վարելահող: Նույն 2006 թվ.-ին Թուրքիայում վարելահողը կազմում էր ողջ երկրի հողատարածքի 30,4%-ը, մինչդեռ Հայաստանում՝ ընդամենը 17,7%-ը: Սա իհարկե արտացոլում է, այն փաստը, որ Հայաստանը հիմնականում լեռնային երկիր է:

Այս ցուցանիշները փաստում են նաև այն մասին, որ գյուղատնտեսական ապրանքների արտադրության մեջ Թուրքիան ունի համեմատական առավելություն Հայաստանի նկատմամբ: Այս արդյունքը հիմնավորվում է նաև այն դիտարկումով, որ 2006 թվ.-ի ընթացքում Թուրքիան ունեցել է հարյուր հեկտարի հաշվով ավելի շատ գյուղատնտեսական մեքենաներ (4,27 մեքենա), քան Հայաստանը (2,8 մեքենա), և նրանով, որ Թուրքիան

---

[1] Samuelson, Paul A., 2004, 'Where Ricardo and Mill Rebut and Confirm Arguments of Mainstream Economists Supporting Globalization', The Journal of Economic Perspectives, Vol. 18, No. 3, p 135-146.
[2] Baicker, Katherine, Marit, Rehavi, 2004, 'Policy Watch:Trade Adjustment Assistance', Journal of Economic Perspectives, Vol. 18, p 239-255.
[3] Magee, Christopher, 2001, 'Administered Protection for Workers:An Analysis of the Trade Adjustment Assistance Program', Journal og International Economics, Vol. 53, No. 1, p 105-125.
[4] IMF, WEO Database, 2006.
[5] Food and Agriculture Organization, International Energy Agency, International Labour Organization, United Nations Educational, Scientific, and Cultural Organization (UNESCO) Institute for Statistics.